



ՀՐԱՄԱՆ

Երևան, Մ.Խորենացու 3

< 17 > Հոկտեմբեր 2013թ. N 2/690 -Ա

Հ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ, Ա.ՂԵՎՈՆԴՅԱՆԻՆ, Վ.ԴԱԼԼԱՔՅԱՆԻՆ,
Ա.ՍԱՐԻԲԵԿՅԱՆԻՆ, Ա.ՆԱՐԻՄԱՆՅԱՆԻՆ, Վ.ՋԱՆԻՆՅԱՆԻՆ, Ս.ԶԻԱԴՅԱՆԻՆ,
Դ.ԴԱՎԹՅԱՆԻՆ, Վ.ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ, Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ԵՎ
Գ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ
ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով „Հարկային ծառայության մասին,, ՀՀ օրենքի 25 հոդվածի 1-ին մասի 2-րդ և 4-րդ կետերով և հիմք ընդունելով ՀՀ ԿԱ Պետական եկամուտների կոմիտեի հարկային մարմնի ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովի 11.10.2013թ. թիվ 21/2013 եզրակացությունը

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ`

1. ՀՀ ԿԱ ՊԵԿ Վանաձորի տարածքային հարկային տեսչության Տեղեկատվության և վերլուծության բաժնի պետ Համազասպ Հարությունյանին հայտարարել, „ԳՐԱՎՈՐ ՆԿԱՏՈՂՈՒԹՅՈՒՆ,,:

2. ՀՀ ԿԱ ՊԵԿ Վանաձորի տարածքային հարկային տեսչության Ստուգումների բաժնի հարկային տեսուչներ Արամ Ղևոնդյանին և Վարուժան Դալլաքյանին ենթարկել նյութական պատասխանատվության՝ յուրաքանչյուրին 13750 դրամի չափով:

3. ՀՀ ԿԱ ՊԵԿ Վանաձորի տարածքային հարկային տեսչության Ստուգումների բաժնի հարկային տեսուչ Արտակ Սարիբեկյանին, Ստուգումների կազմակերպման և դիտարկման վարչության Ստուգումների N 3 բաժնի գլխավոր հարկային տեսուչներ Արա Նարիմանյանին և Վազգեն Զանինյանին ենթարկել նյութական պատասխանատվության՝ յուրաքանչյուրին 18000 դրամի չափով:

4. ՀՀ ԿԱ ՊԵԿ Ստուգումների կազմակերպման և դիտարկման վարչության Ստուգումների N 3 բաժնի գլխավոր հարկային տեսուչ Սամվել Զիադյանին և Խոշոր հարկ վճարողների հարկային տեսչության Վերամշակող արտադրության ոլորտային հսկողության բաժնի գլխավոր հարկային տեսուչ Դավիթ Դավթյանին ենթարկել նյութական պատասխանատվության՝ յուրաքանչյուրին 5000 դրամի չափով:

5. ՀՀ ԿԱ ՊԵԿ Օպերատիվ հետախուզության վարչության 2-րդ բաժնի գլխավոր օպերիվազոր Վարդան Վարդանյանին, նույն բաժնի ավագ օպերիվազորներ Հովհաննես Գրիգորյանին և Գևորգ Հարությունյանին ենթարկել նյութական պատասխանատվության՝ յուրաքանչյուրին 9950 դրամի չափով:

6. ՀՀ ԿԱ ՊԵԿ Ֆինանսահաշվային վարչության պետ Զ.Պողոսյանին.

- անհրաժեշտ հսկողություն իրականացնել սույն հրամանի 2-5-րդ կետերում նշված աշխատակիցներից գումարի գանձման ուղղությամբ:

7. ՀՀ ԿԱ ՊԵԿ Անձնակազմի կառավարման վարչության պետ Ե.Սարգսյանին.

- սույն հրամանը ծանոթացնել ողջ անձնակազմին:

8. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:



Handwritten signature

Գ.ԽԱԶԱՏՐՅԱՆ